

ՐԱՅԱԿԱՆ ՔԱՌԱՆԴԱՄ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՌԱՅԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ժամանակակից գրական հայերենում գործածականության և հաճախ-
դեպության առումով բայական քառանդամ բառակապակցությունները (ԲՔԲԿ)¹
վզալիորին դիցում են բայական պարզ (ԲՊԲԿ) և բայական եռանդամ (ԲԵԲԿ)²
բառակապակցություններին: Չնայած լրացումների զուգորդումների թվով ԲՔԲԿ
գերադանցում են ԲՊԲԿ և ԲԵԲԿ, այդուհանդերձ գրավոր խոսքում ոճի պար-
զություն և հաղորդման հստակության պահպանման նպատակով դրանք հա-
մեմատաբար սակավադեպ են: Բայի ինը լրացումները (բայի լրացում են դառ-
նում գոյականի տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյա-
կան հոլովները, մակբայը, կապային կառույցը, ածականը և դերբայը) ԲՊԲԿ-ի
մեջ հանդիպում են ինը անգամ (լրացում+լրացյալ կաղապար), ԲԵԲԿ-ում
միմյանց հետ զուգորդվում են 36 անգամ (երկու լրացում+լրացյալ), ԲՔԲԿ
կաղմում՝ 84 անգամ (երեք լրացում+լրացյալ): Դեռ ավելին՝ եթե հաշվի
առնվեն կաղապարի մեջ միևնույն լրացման կրկնությունները (երբեմն միևնույն
լրացումը կարող է կաղմավորել եռանդամ լրացական կաղապար), ապա
լրացումների զուգորդումների թիվն անցնում է 150-ից:

Ցուցանիշը՝ հակառակն է կազմությունների գործառական հատկանիշնե-
րի հաշվառման դեպքում: 2. Թումանյանի «Գիրքորդ»³ պատմվածքը բաղկա-
յած է 425 բայական բառակապակցությունից (ԲԲԿ), որից ԲՊԲԿ՝ 270, ԲԵԲԿ՝
139, ԲՔԲԿ՝ 15, ԲՀԲԿ (բայական հինգանդամ բառակապակցություն)⁴ 1: Նար-
Դոսի «Շնեղ օրերից մեկը»⁵ պատմվածքը պարունակում է 411 ԲԲԿ, որից՝ 230
ԲՊԲԿ, 147 ԲԵԲԿ, 32 ԲՔԲԿ և 2 ԲՀԲԿ: Շիրվանզադեի «Քառաս»⁶ վեպի ինը
էջում կան 256 ԲԲԿ, որից՝ 155 ԲՊԲԿ, 83 ԲԵԲԿ, 15 ԲՔԲԿ և 3 ԲՀԲԿ: Վ. Դավթ-
յանի «Ռեքվիեմ»⁷ պոեմն ունի 235 ԲԲԿ (144 ԲՊԲԿ, 80 ԲԵԲԿ, 11 ԲՔԲԿ): Ավ.
Խաչակյանի «Աբու-Լալա Մահարի»⁸ պոեմի առաջին չորս սուրահները բո-
վանդակում են 230 ԲԲԿ, որից՝ 135 ԲՊԲԿ, 84 ԲԵԲԿ, 11 ԲՔԲԿ: Ուսումնասիր-
ված հատվածներից երևում է, որ դրանցում ԲՊԲԿ կազմում են 60, ԲԵԲԿ՝ 34,
ԲՔԲԿ՝ 5,5 տոկոս, հինգ և ավելի անդամ ունեցող ԲԲԿ-ները հանդիպում են
հազվադեպ:

Չնայած գործառական սակավադեպությունը ԲՔԲԿ-ները դրսևորում են
կառուցվածքային բազմազանություն: Ըստ լրացումների և լրացյալի կա-
պակցման բնույթի գոյություն ունեն երեք կարգի կազմություններ՝ առդրա-
կան, առդրական-խնդրառական, խնդրառական:

Լրացումների առդրական հարաբերությամբ ԲԲԿ-ները սակավադեպ են:
Այս կազմություններում լրացումներն արտահայտում են տարբեր կարգի պա-

1 Հ. Թումանյան, Ընտիր երկեր, Երևան, 1978, էջ 261—276:

2 Նար-Դոս, Երկերի ժողովածու, Երեք հատորով, հ. I, Երևան, 1955, էջ 173—188:

3 Շիրվանզադե, Երկերի ժողովածու, տասը հատորով, հ. III, Երևան, 1959, էջ
127—136:

4 Վ. Դավթյան, Կապույտ գիրք, Երևան, 1978, էջ 151—169:

5 Ավ. Խաչակյան, Երկերի ժողովածու, վեց հատորով, հ. II, Երևան, 1974,
էջ 53—66:

րազայական իմաստներ և, որպես կանոն, նախադաս են լրացցալին: Կարևոր է լրացումների շարադասությունը միմյանց և լրացցալի նկատմամբ⁶, Հադորդման հստակության պահպանման և մյուս լրացումների հետ չկապակցվելու համար գոյականով կամ կապալին կառուցով դրսևորված պարագայական իմաստի լրացումը կարող է հտադասվել լրացցալին: Օրինակ՝ «Գիշերը վերմակի տակից երբեմն զգույշ ծիկրակում էր», (ՀԹ, ՀԵ, 271), «Վոսուղին երկու անգամ իուլ հագաց կեկորդում» (ԳԱ, Թ, 40):

Առդրական-խնդրառական բնույթի կազմություններում լրացումներից մեկը կամ երկուսը դրվում են լրացցալի պահանջով: Այս կարգի ԲԲԿ-ները տաժածված են: Լրացցալի բառիմաստով պայմանավորված մեկ լրացումը սովորաբար հտադասվում է լրացցալին, իսկ աշգլխի երկու լրացման դեպքում դրանք շարադասվում են ինչպես ԲԲԿ մեջ: Առդրվող լրացումները նախադաս են լինում կաղապարում. «Վեր թռավ ու բաճով անխոս հաճակվեց քանդված ճումբերի վրա» (ԴԴ, Ե, 312), «Տխրությունը մարդկային է, նա հանախ փրկում է մարդու հոգին տաժամությունից» (ՀԹ, ԵԺ, 18):

Խնդրառական (այս բառն այստեղ գործածում ենք ավելի լայն իմաստով, որպես և՛ խնդիր, և՛ պարագա պահանջող, բառիմաստով պայմանավորված լրացում ստանալու հատկանիշ) բնույթի կապակցություններում երեք լրացումները պայմանավորվում են լրացցալի բառաբերականական հատկանիշներով: Այս դեպքում առանձնանում են լրացցալի իմաստային ծավալման երեք դեպք: ա) Երկարժույթ բայերը կարող են պարտադիր լրացման հետ միասին ստանալ երկու այլ լրացում, որոնք նույնպես պայմանավորվում են լրացցալի բառիմաստով, բայց դրանք կապվում են թույլ խնդրառությամբ: Այսպես՝ զնալ բայը պահանջում է ուղղության իմաստի լրացում, բայց որպես գիտակցորեն կատարվող և շարժում արտահայտող գործողություն: նա այն կարող է ստանալ նաև նպատակի և տեղի ելման իմաստի լրացումներ՝ մի տեղից զնալ մի այլ տեղ մի բանի համար: Եռարժույթ բայերը թույլ խնդրառությամբ կարող են ստանալ միջոցի, նպատակի, շահի և այլ լրացումներ: բ) ԲԲԿ կազմավորման հիմք կարող է դառնալ լրացցալի բաղմիմաստությունը: Բացառել բայը պարզաբանել իմաստով պահանջում է արդյունքի հայցական հոլով+նաղորդման տառական հոլով լրացական կաղապար, իսկ պատճառաբանել իմաստով՝ գործողության առարկայի հայցական հոլով+հիմունքի գործիական հոլով լրացական կաղապար (դասը բացատրել աշակերտներին և արարքը բացատրել հարբածությամբ): Այս երկու իմաստների համատեղ արտահայտությամբ կունենանք՝ Առաջադրանքի թերակառուցումը միևնույնությամբ բացառել հումքի վատ սպասարկմամբ կապակցությունը: Կարող են համատեղվել խնդրային և պարագայական նշանակությունները, ինչպես՝ ուղարկել մեկին մի բան (մատուցման) և մի տեղից մի այլ տեղ (տեղափոխման), որից կունենանք երկու ԲԲԿ, որոնցից յուրաքանչյուրում համատեղվում են մատուցման և տեղի իմաստները՝ դպրոցից բացիկ ուղարկել ծնողին և ծանրոց ուղարկել Երևան քրոջը: գ) Առանձին են այն դեպքերը, երբ լրացումներից մեկն ունի բառահարաբերական ձևերի արժեք: Այսպես՝ զանազանել բայը պահանջում է հայցական հոլով+բացառական հոլով լրացական կաղապար (ալյուրը զանազանել ձյունից), իսկ երբ ԲԲԿ առարկայական եղբերը հանդես են գալիս որպես միասնություն (ալյուրն ու ձյունը), զանազանել բայի անշատման իմաստը իրացնում է փոխադարձ դերանկան բացառական հոլովը (ալյուրն ու ձյունը զանազանել իրարից-միմյանցից), որը տվյալ կիրառությունում, ըստ էության, ունի -ից ձևերի արժեք:

Պետք է նկատի ունենալ, որ վերը նշված երեք բնույթի կազմությունները գործառական միևնույն հատկանիշները չունեն: Գեղարվեստական գրականությունից մեր ուսումնասիրած հատվածներում գործածված 84 ԲԲԿ-ից առ-

6 Գ. Ջահուկյան Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 423:

դրական բնույթի են 6-ը, առդրական—խնդրառական՝ 71-ը (ընդ որում՝ 36-ը մեկ պարտադիր լրացմամբ, 35-ը երկու պարտադիր լրացմամբ), խնդրառական՝ 7-ը, որոնք համապատասխանաբար կազմում են ընդհանուր թվի 7, 85 և 8 տոկոսը:

Կառուցվածքային առումով հետաքրքրական են այն ԲՔԲԿ-ները, որոնց լրացումներն արտահայտված են միևնույն խոսքի մասով կամ լրացումների և լրացյալի կապը խնդրառական բնույթի է: Սակավադեպ են հատկապես այն կաղմուկյունները, որոնցում լրացական կաղապարի անդամները միևնույն խոսքի մասն են կամ միևնույն խոսքի մասի միևնույն ձևերը: Այդպիսի լրացում դառնում են գոյականի հայցական հոլովը (խիստ սակավադեպ նաև տրական, բացառական, գործիական հոլովները), մակբայը և կապային կառույցը:

Երեք հայցական հոլովով լրացական կաղապար ունեցող ԲՔԿ-ները լինում են առդրական-խնդրառական և խնդրառական բնույթի: Առդրական բնույթի կաղմուկյունները խիստ հազվադեպ են, քանի որ ժամանակի, ձևի-վիճակի և մասամբ չափի հայցականներն են, որ առդրվում են բային (չափի հայցականը ևս որոշ բայերի բառիմաստի պահանջով է դրվում⁷, ինչպես՝ տեել, կշռել, գնահատել, արժենալ և այլն): Նման կառույցի օրինակ է՝ Այդ օրը ինքնաթիռի տոմար ձեռք բերու ժամ վազվզում էր: Այսպիսի կաղապար կարող են կազմավորել բազմաթիվ բայեր առանց իմաստային սահմանափակման: Առդրական-խնդրառական բնույթի ԲՔԿ-ներում առաջին հայցականը, սովորաբար, լինում է ժամանակի իմաստով, որն առդրվում է լրացյալին, մյուս երկու լրացումները կամ խնդրային և տեղի-նպատակի իմաստներով են՝ անցողական բայերի պահանջով, կամ տեղի և նպատակի իմաստներով՝ անանցողական բայերի պահանջով: Երկու դեպքում էլ լրացյալներն արտահայտում են նպատակային շարժման ընդհանուր գաղափար. «Ձմեռը ահագին բազմություն կգար հյուր Մամիկոնեից ամրոցը» (ԴԴ, Վ, 503): «Մարտերի հենց առաջին օրը ինքը նրան գնդի վաշտերը տարավ» (ՀՔ, ԵԺ, 99):

Պարտադրական շարժում արտահայտող մի շարք բայեր իրենց իմաստի պահանջով կարող են ստանալ գործողության առարկայի և տեղի հայցականների հետ միասին նաև նպատակի հայցականով լրացում: Այս դեպքում կապակցությունն արդեն խնդրառական բնույթի է: Այսպիսի լրացյալ են դառնում ուղարկել, հրավիրել, հանապարհել, բերել և այլ բայեր: Օրինակ՝ «Սագաստան կուղարկեմ ափսոս ձեռ գավակներին ու կանանց» (ԴԴ, Վ, 289):

Երեք մակբայով լրացում ունեցող ԲՔԿ-ները աննշան բացառություններով առդրական բնույթի են: Այս կաղապարում ավելի հաճախ հանդիպում են ժամանակի, չափի, ընդհանրական մակբայները. «Ու միանգամից ետից սաստիկ լրջացավ» (ՇԹ, ՄԲՄ, 299): Մակբայներից մեկը սակավադեպ կարող է պայմանավորվել լրացյալի բառիմաստով, որպես տարբերակային խնդրառություն: «Արտափուտ տակավին վարվում էր Սմբատի հետ բարեկամաբար» (Շ, ԵԺ, 140):

Կապային կառույցով արտահայտված երեք լրացումները ԲՔԲԿ լրացյալին կապվում են առդրական և առդրական-խնդրառական հարաբերությամբ: Առդրական բնույթի կապակցությունները հաճախադեպ չեն: «Իբրև վառձ, մի ամբողջ ամիս, առավոտից մինչև կեսօր Անույայակի համար խալի էի գործում» (ԱՍ, Կ, 110): Ավելի տարածված են առդրական-խնդրառական բնույթի կաղմուկյունները, որոնցում լրացումներից մեկը կամ երկուսը դրվում են լրացյալի բառիմաստի պահանջով: «Նա այդ մասին ոչինչ չէր խոսել մինչև այժմ թագուհու հետ» (Մ, ԳՄ, 7): «Անճնատուր լինելուց հետո կապվեց ինձ հետ շան պես» (ՆԴ, ՊՎ, 286):

Բազմաբնույթ են տարբեր խոսքի մասերով և գոյականի տարբեր հոլովներով դրսևորված լրացումների և լրացյալի խնդրառական հարաբերությամբ ԲՔԲԿ-ները:

⁷ Նույն տեղում, էջ 476:

Հայցական հոլով+բայ+երկու տրական հոլով բառակապակցական կազմությունը հատուկ է երկու իմաստախմբի բայերի՝ *Ընդ որում՝* երկու դեպքում էլ լրացումների և լրացյալի իմաստային կապը նույնն է՝ գործողության առարկայի հայցական հոլով+բայ+մատուցման առական հոլով+նպատակի տրական հոլով: Երկու դեպքում էլ մատուցման տրականը դրսևորվում է անձնանիշ գոյականով: Լրացյալները երկու իմաստախմբի բաժանելու հիմք են դառնում մատուցման տրականի՝ մի դեպքում մատուցման-շահի, մյուս դեպքում մատուցման-հաղորդման իմաստների տարբեր արտահայտությունները: Մատուցման-շահի տրականով լրացում ունեցող կառույցի լրացյալ են դառնում ուղարկել, բերել, տանել, կանչել, հասցնել և այլ բայեր: Այս կարգի կազմությունները քիչ գործածական են. «Որոշեց քեզ կնության ուղարկել իր ֆրոլը» (ՊԶ, ԱԵ, 261):

Մատուցման-հաղորդման տրականով ԲԲԿ-ների լրացյալ-բայերից են առաջադրել, առաջարկել, հանձնարարել, պարտադրել, պատվիրել և այլն: Օրինակ՝ «Գարնանն էլ Արսեն Իվանիչն ինձ զանազան խոսքեր էր առաջարկում ուտելու» (ՀՔ, ԵԺ, 116): Այս կառույցում նպատակի տրականն ավելի հաճախ հանդիպում է հայցական հոլովով:

Գործիական հոլով+բայ+երկու տրական հոլով կազմությամբ ԲԲԿ-ներում գործիական հոլովը լրացյալին կապվում է թույլ խնդրառությամբ: Լրացյալ են դառնում խանգարել, արգելել, համոզել, ստիպել, դրդել և այլ բայեր. «Չէր փորձում ոչնչով արգելել նւան շարունակելու իր խոշտանգիչ խոսքը» (ԴԴ, Վ, 471):

Բացառական հոլով+հայցական հոլով+բայ+տրական հոլով կաղապարը բավականին գործուն է ժամանակակից հայերենում և ունի իմաստային տարբեր արտահայտություններ: Տանել, հանձնել, փոխանցել, ուղարկել և այլ բայ-լրացյալներով կառույցներում բացառական հոլովը մի դեպքում ունի անձի, մյուս դեպքում՝ տեղի ելակետային իմաստ: ԲԲԿ ընդհանուր իմաստն է՝ մեկից (մի տեղից) մի բան տալ մեկին. «Ինձանից հրաման տար պարսից զորահրամանատարներին» (ԴԴ, Վ, 331): «Իսկ այժմ ես կարող եմ Բաթումից նրան նամակ ուղարկել» (ՆԶ, ՊՊ, 391):

Մատակարարել, բաժին հանել, մատուցել, տրամադրել և այլ բայեր այս կաղապարում թույլ խնդրառությամբ պահանջում են միայն տեղի ելակետային բացառական հոլով. «Խմբին երբեմն մատակարարում էր մեր ագագակից մրգեղեն» (ՎԹ, ԿՊ, 320):

Հանել, բարձրացնել, իջեցնել, դնել և սակավաթիվ այլ անցողական բայեր պահանջում են տեղի ելման բացառական հոլով և, որպես խնդրառական տարբերակ, տեղի տրական հոլով: «Ինձ հանեց կյանքի հատակից իմ ազգն իր ուսերին» (ՀՇ, ՔԶ, 90):

Վերածել, փոխել, փոխարկել, քարգմանել, փոխադրել և սակավաթիվ այլ բայեր իրենց բառիմաստի պահանջով ստանում են ելակետի բացառական և վերածման տրական հոլովներով լրացումներ, ինչպես՝ պոեմը ռուսերենից քարգմանել հայերենի:

Կիսել, բաժանել բայերը միաժամանակ կարող են իրացնել անշատման և վերածման իմաստները: «Ինքզինդանակալի գիծը բաժանել էր երկիրը երկու մասի նրա կենսական կենտրոններից» (ՀՔ, ԵԺ, 8):

Գործիական հոլով+հայցական հոլով+բայ+տրական հոլով բառակապակցական կազմության մեջ լրացյալ են դառնում բազմաթիվ բայեր, որոնք պահանջում են հայցական հոլով+տրական հոլով լրացական կաղապար: Գործիական հոլովը լրացյալին կապվում է թույլ խնդրառությամբ: «Աննային ծանուցագրով տեղեկացրել էին օրը, ժամը» (ՇԹ, ՄՐԱՄ, 78): «...դրանով բարիքներ մատուցանե ժողովրդին» (ԱԻ, ԵԺ, 111):

8 Տրական հոլովի նշված իմաստների տարբերակման վերաբերյալ տե՛ս Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 215:

վանառել, ծախել բայերը համատեղում են մատուցման և շափի իմաստները: «Յուր հերթը ծախում էր ցանկացողին հինգը-տասը կոպեկով» (Շ, Ե, 364):

Մեկել, մեռնել բայերը սովորաբար լրացվում են ժամանակի տրական և տեղի ներգոյական հոլովներով: Մեռնել բայն ստանում է նաև պատճառի իմաստով լրացում և այդպիսով կազմավորում ԲՔԲԿ-ներում: «Մենողները սովից մեռել են 1915 թվականին վաղաժամապատում» (ՆՁ, ՊՊ, 15):

Գործիական հոլով+հայցական հոլով+բայ+բացառական հոլով կազմությունը գործուն է ժամանակակից հայերենում:

Խնդրային լրացական կաղապարում գործիական հոլովն արտահայտում է միջոցի իմաստ գառել, անջատել, վանել, զրկել, շեղել, պատրաստել, կապել, բերել և այլ բայ-լրացյալներով ԲՔԲԿ-ներում: «...երկաթը ֆաբից գատում էր ֆոսֆորի մոգուքյամբ» (ՀՄ, Ծ, 299), «...Դրանով իսկ ապացուցվում էր այգին հնարավոր հիվանդությունից» (ՆՁ, ՊՊ, 163):

Փակել, ծածկել բայերը համատեղում են նյութի և խուսափման իմաստները: «Երեսխային մի կողմ տաղավ և իրենով նրանց ծածկեց երեսխայից» (ՀՄՍ, 204), «Քարակույտերով կիրճի մուտքը փակել թշնամիներից»:

Ջանազանել, ջռկել, տարբերել և սակավաթիվ այլ բայեր այս կաղապարում պահանջում են հիմունքի գործիական հոլով թույլ խնդրառությամբ: Որինակ՝ նորեկներին տեղացիներից տարբերել հագուստով:

Մերել, փաշել, փշել, հանել, պոկել և այլ բայեր այս կառուցում լրացվում են միջոցի գործիական և տեղի բացառական հոլովներով: «Քաշկինակով փշում էր նանենքը նրա երեսից» (ՆԴ, ԾԺ, 42):

Շարժում արտահայտող բայերը ծավալվում են ելման բացառական, անցման գործիական և ուղղություն-ժամանման հայցական հոլովներով, ինչպես՝ զննալ, մեկնել, բարձրանալ, իջնել և այլն: «Տան հուսի այդ կածանով ֆարափից իջնում էի պարտեզ» (ԱՄ, Կ, 81): Գործիականը կարող է արտահայտել նպատակի իմաստ, որի դեպքում սովորաբար հտադաս է լինում կաղապարում: «Բարելոնից եկավ Երուսաղեմ գիտությունը լրացնելու տեղով» (ԱԻ, ԿԺ, 209):

Ներգոյական հոլով+հայցական հոլով+բայ+բացառական հոլով բառակապակցական կառույցը հատուկ է սովորել, ափնկալել, սպասել, գերադասել, առանձնացնել և այլ լրացյալների, որոնց ներգոյականով լրացումը սահմանափակման իմաստ ունի և իրացնում է տարբերակային խնդրառություն: «Մեր կոլտնտեսությունները անսանապահության բնագավառում նրանից շատ բան պետք է սովորեն» (ՔԹ, ՈՀ, 211): Մի գործում մեկին առանձնացնել մյուսից: Այս կաղապարն են կազմավորում մի շարք բայ-լրացյալներ երկու տարբեր իմաստների համատեղմամբ:

Պաշտպանել, փրկել, ապահովել և սակավաթիվ այլ բայեր կարող են ծավալվել սահմանափակման ներգոյականով և խուսափման բացառականով: Որինակ՝ Կարգապահության հարցում դիրեկտորի հովանավորությունն էլ նրան չփրկեց պատից: Պատասպարել, պանել, թափցնել և այլ բայեր համատեղում են խուսափման և տեղի իմաստները. ինչպես՝ Պարիկը հորից թափցրել էր պանաբանում: Հետախույզին թշնամուց պատասպարել էր ձեղնահարկում:

Ժամանակակից հայերենում տաղածված են իրենց կազմում երկու հայցական հոլովով լրացումներ ունեցող ԲՔԲԿ-ները:

Հայցական հոլով+բայ+տրական հոլով+հայցական հոլով կառուցվածքով ԲՔԿ-ները հատուկ են բնորել, բնդունել, հանաչել, տանել և այլ բայ լրացյալների: Տրական հոլովով լրացումը շահի իմաստով է լինում, երկրորդ հայցականը նպատակ է արտահայտում կամ երկրորդական ուղիղ խնդիր է: Նպատակի հայցականը կաղապարում սովորաբար հտադաս է լինում, երկրորդական ուղիղ խնդրի հայցականը՝ լրացյալին նախադաս: Որինակ՝ «Իմ

նոր գործած գորգը տաբեֆ երան ընծա» (ՂԱ, ԸԵ, 118): «Վարազվաղանը որոշեց իրեն թշնամի ցույց տալ Վարդանին» (ԴԴ, Վ, 212):

Պարտադրական շարժում արտահայտող բայերի պահանջով երկրորդ հայցական հոլովով դրվում է տեղի, տրական հոլովով՝ նպատակի իմաստով լրացում: «Այդ տարվա աշնանը մեզ Մոսկվա մեցումների տաճան» (ՀՄ, Օ, 217): Այս կառույցի համար առանձնահատուկ է այն դեպքը, երբ երկու հայցական հոլովով լրացումները հանդես են գալիս միասնաբար որպես հոգնակի, լրացյալ-բայի իմաստային ծավալումը կատարվում է լրացուցիչ բառի՝ փոխադարձ դերանվան տրական հոլովի միջոցով: Այսպես՝ խառնել, փակցնել իմաստի դայերը պահանջում են առարկայական երկու եզր՝ մի բան խառնել մի այլ բանի: Այդ նույն իմաստը դրսևորվում է նաև երեք յուրահատուկ այլ կազմություններով՝ ավազն ու կիրը խառնել, ավազն ու կիրը խառնել իրար, ավազն ու կիրը խառնել իրար հետ: Սակայն այս կազմությունները նույնարժեք չեն գործառական և առարկայական եզրերի՝ միմյանց նկատմամբ ունեցած հարաբերության տեսանկյունով: Առաջին լրացական կաղապարը (հայցական հոլով+տրական հոլով) հատուկ է հանգման իմաստի բոլոր անցողական բայերին, ընդ որում՝ հայցականով դրված գոյականը ծավալով կամ փոքր է տրականով գոյականից (կաթիլը խառնել ծովին), կամ հավասար է նրան (ավաղը խառնել կրին): Մյուս երեք կառույցներն առանձնահատուկ գործածություններ են: Դրանցում առարկայական եզրերը դիտվում են որպես ծավալային հավասարություններ, և դրանց տեղերի փոփոխությունը չի փոխում ԲԲԼ իմաստը (որոշ դեպքերում եզրերը նույնիսկ չեն առանձնանում, այլ արտահայտվում են գոյականի հոգնակի թվով՝ մաղերը հյուսել, փաստերը զուգակցել, բառերը զուգորդել):

Երկու հայցական հոլովից բաղկացած լրացական կաղապարը նախադասության մակարդակի իրողություն է, նրա հավասարազոր եզրերից մեկի հանդումը մյուսին հասկանալի է դառնում հնչերանգով: Բառակապակցական մակարդակում երկու եզրերն ըմբռնվում են որպես առաջին եզր, և սպասվում է տրական հոլովով հանգման իմաստի լրացումը:

Երրորդ և չորրորդ կառույցները (ավաղն ու կիրը խառնել իրար կամ իրար հետ) տարբերակային են, կարող են փոխարինել մեկը մյուսին: Տրականով դրված փոխադարձ դերանունը (նաև նրա տարբերակ կապային կառույցը) փաստորեն ունի բառահարաբերական ձևույթի արժեք (տրականի -ին հոլովակերտի արժեք): Այս կարգի կապակցություններով արտահայտվում է հատկապես երկուսից ավելի առարկաների փոխկապը, գործածական են նաև երկու եզրերով կազմությունները. «Երկրի բախտը, իր իշխանությունը, որդու ապագան շաղկապեց իրար» (ՊԶ, ԱԵ, 301): «Այսպես մեր հոգու մեջ կյանքը իրար խառնեց Մեր առաջին վիշտը և առաջին խինդը» (ՊՍ, ԵԺ, 26):

Երկու հայցական հոլով+բայ+բացառական հոլով կաղապարը նույնն է, ինչ վերոնշյալ առանձնահատուկ կազմությունը, միայն այստեղ փոխադարձ դերանունը դրվում է բացառական հոլովով և ունի -ից հոլովակերտի արժեք, բացակայում է խնդրառական տարբերակը: Լրացյալ են դառնում անշատման իմաստով մի շարք բայեր. ինչպես՝ բաժանել, ջոկել, անջատել, տարբերել, զանազանել, առանձնացնել, տարբերակել, հեռացնել և այլն: «Նա զանազանում էր իրարից վրացիներին, հայերին և ադրբեջանցիներին» (ՀԲ, ԵԺ, 36): «Մութ ձորը բաժանում է հայերին ու թուրքերին իրարից» (ՀԲ, ԸԵ, 289):

Տեղափոխել, փոխադրել, ուղեկցել, փաշել, բարձրացնել և այլ բայեր պահանջում են խնդրային հայցական հոլով+տեղի բացառական հոլով+տեղի հայցական հոլով լրացական կաղապար: «Նայում էին, թե ինչպես են նորարենակները տեղափոխում իրենց սայլից տուն» (ՇԲ, ՄԲՄ, 182): «Քուրդն Արագածից ոչխար էր իջեցնում քաղաքի շուկա» (ՀՄ, Ս, 304):

Նպատակային շարժում արտահայտող բայերը տեղի հայցական և բացառական հոլովների հետ թույլ խնդրառությամբ պահանջում են նպատակի հայցական: «...Տեսել էի փաղափից գյուղ ամառանոց եկածների ձեռքին» (ԱՍ, Կ, 83):

Հայցական հոլով-գործիական հոլով-բայ-հայցական հոլով կազմու-թյամբ ԲՔԲԿ մեջ գործիական հոլովը թույլ խնդրառություններ է կապվում լրացյալին: «Ես դեղը պիպետկայով լցնում եմ բերանը» (ԱԱ, 2, 202):

Տալ, հանձնել, ընդունել, նշանակել և սակավաթիվ այլ բայ-լրացյալներ այս կաղապարում պահանջում են համապատասխանության իմաստի գործիական հոլով (այս լրացման իմաստն այժմ ավելի հաճախ իրացվում է ու-պես, իբրև կապերի ու նրանց խնդիրների միջոցով): «Տուր երան մի հարուստ վաճառականի խանութ գործակատարի պաշտոնով» (Շ, Ե, 22):

Տարբերել և այս իմաստի մի շարք այլ բայեր ստանում են երկու հայցա-կան հոլով-գործիական հոլով լրացական կաղապար. «Հայրդ խելո՞ք ու հի-մարին դրանով էր զանազանում» (ՊՍ, ԵԺ, 174):

Ժամանակակից հայերենում գործածական են այնպիսի ԲՔԲԿ-ներ, որոն-ցում լրացումներից մեկը, սակավադեպ նաև երկուսը, պայմանավորված լրաց-յալի բառիմաստով, արտահայտվում են կապային կառույցով (նկատի չեն առնվում այն դեպքերը, երբ կապային կառույցը կաղապարում կատարում է տարբերակային լրացման դեր, ինչպես՝ «Ավիրը նուրիկին հիվանդանոցից տե-ղափոխեց իր մոտ» (ԱԱ, 2, 43) կամ՝ տեղափոխեց իր բնակարանը):

Հայցական հոլով-բայ-տրական հոլով-կապային կառույց կաղապա-րով ԲՔԲԿ լրացյալ են դառնում պատմել, ասել, հաղորդել, հայտնել և սակա-վաթիվ այլ բայեր: «Եվ ոչ ոքի մի խոսք չէր ասում այդ մասին» (ՀՔ, ԸԵ, 362): Դատապարտել, արժանացնել, ներկայացնել, շնորհել և այլ բայեր այս կաղապարում պահանջում են պատճառահիմունքային իմաստով կապային կառույց և հանգման տրական հոլով: Այս կարգի ԲՔԿ-ները հատուկ են լեզվի վարչագործարարական ոճին: Օրինակ՝ «Առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու համար արհկոմը տասը կոմերիտականի ներկայացրել է դրա-մական խրախուսանքի»:

Ներել բայը առանձնակի գործածություններում կարող է ստանալ շահի տրականով լրացում՝ խնդրային հայցականի և պատճառահիմունքային իմաս-տով կապային կառույցի հետ միասին: Այսպես՝ «Ընկերներից շատերը հենց դրա համար էլ երան ներում էին ամեն ինչ» (ԳՍ, Թ, 63):

Տարածված են հայցական հոլով-բացառական հոլով-բայ-կապային կառույց կաղապարով ԲՔԿ-ները:

Լսել, իմանալ, տեղեկանալ և այլ բայեր պահանջում են ելակետի բացա-ռական, խնդրային հայցական հոլովներով և վերաբերության իմաստի կա-պային կառույցով լրացումներ: «Դու ինձանից ամեն բան կիմանաս Մեծ երկ-րի մասին» (ՇԹ, ՄՐՄ, 414):

Հեռացնել, ազատել, վճարել, դուրս անել և այլ բայ-լրացյալներով ԲՔԲԿ-ներում բացառական հոլովը տեղի իմաստով է, կապային կառույցը՝ պատ-ճառի, խնդրային հայցականի միշտ արտահայտվում է անձնանիշ գոյականով: Օրինակ՝ «Գեորգին այգուց հեռացրել են այդպիսի անպատվաբեր պատճառով» (ՆԶ, ՊՊ, 379):

Խուսափել, ամաչել, զգուշանալ և սակավաթիվ այլ բայեր պատճառահի-մունքային իմաստի կապային կառույցի և խուսափման բացառականի հետ կարող են լրացվել անորոշ դերբայի հայցական հոլովով: «Սոսկալի խայտա-ռակությունից հետո հարևաններից ամաչում էր ամենքի աչքի առաջ դիմավո-րել տղային» (ՇԹ, ՄՐՄ, 130):

Խնդրել, հայցել, սպասել, պահանջել, կառուցել, հայթայթել, ներմուծել և բազմաթիվ այլ բայեր ԲՔԲԿ մեջ ստանում են խնդրային հայցականի հետ նաև ելակետի կամ նյութի բացառական հոլով և նպատակի կամ շահի իմաստով կապային կառույց: «Միշտ սովորներից զբասրություն էր հայցում հայ ժո-ղովրդի համար» (ՀՔ, ԸԵ, 345): «Այս ոսկուց փամփուշտների համար գրն-դակներ կարժեք» (ՇԹ, ՄՐՄ, 527):

Գործիական հոլով-հայցական հոլով-բայ-կապային կառույց ԲՔԲԿ լրացյալ են դառնում գրգռել, ոգևորել, պարգևատրել, ազատագրել, աջակ-

ցել, խանգարել և այլ բայերու Գործիական հոլովն արտահայտում է հիմնականում միջոցի իմաստ, կապալին կառույցը լրացյալին կապվում է տարբեր իմաստներով (վերաբերության, հանգաման, սահմանափակման և այլն)։ Այսպես՝ «Ամեն կիրակի իր ֆարգեներով զբոսում էր ռուս ամբոխին մեր դեմ» (Շ, Ե, 476)։ «Վախենում էի, թե ընկերս իր հիմար վարմունքով մի գուցե ինձ էլ վարկաբեկի Սառայի առջև» (ՆԴ, ՊՎ, 239)։

Գործիական հոլով+բայ+բացառական հոլով+կապալին կառույց կազմության լրացյալ են դառնում վրեժխնդիր լինել, շնորհակալ լինել, վրեժ լուծել և սակավաթիվ այլ բայերու «Դուրյանի կալծակնափայլ տուլերով նա կարծես վրեժ էր լուծում ունկնդիրներին իր խայտառակության համար» (ՆԶ, ՊՊ, 289)։

Հարձակվել, գրոհել, արշավել, խոյանալ և մի քանի այլ բայեր նպատակային շարժման իմաստով գործածվելիս ստանում են տեղի բացառական հոլով+անցման գործիական հոլով+նուղորդյան կապալին կառույց կամ կապալին կառույցը դրվում է ուժեղ խնդրառության՝ հանգաման իմաստով. ինչպես՝ «Հողմերը Գուգարաց աշխարհից Սևանի լեռնանցքով հարձակվեցին լճի վրա» (ՎԱ, ՈՊ, 16)։

Երկու հայցական հոլով+վրա կապով ու խնդրով կառույց լրացական կաղապար են պահանջում կարգել, նշանակել, հաստատել և սակավաթիվ այլ բայեր. «Իր Բուրթել եղբորը նրանց վրա զորապետ կարգեց» (ՍԽ, ՄՍ, 159)։

Այսպիսով, ԲՔԲԿ խնդրառական բնույթի կազմությունների կառուցվածքային արտահայտության բազմազանությունը ցույց է տալիս բայի իմաստային ծանրաբեռնվածության չափը և բնորոշ է ժամանակակից հայերենին։

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ա Գ Ր Ո Ւ Թ Ց Ո Ւ Ն Ն Ե Ր

- ԱԱ,Հ—Ա. Արսմամյան, Հրդհ, Երևան, 1976։
 ԱԻ, ԵԺ—Ավ. Խաճակյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1975։
 ԱՍ,Կ—Ա. Սաճիյան, Կեռմաններ, Երևան, 1976։
 ԳՍ,Բ—Գ. Սևունց, Բնհրան, հ. 1, Երևան, 1963։
 ԴԴ,Ե—Դ. Դեմիրճյան, Երկեր, գիրք առաջին, Երևան, 1977։
 ԴԴ,Վ—Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1954։
 ՀԲ,ԸԵ—Հ. Խուսիսյան, Ընտիր երկեր, Երևան, 1978։
 ՀՄ,Ծ—Հ. Մաքսոսյան, Ծառեր, Երևան, 1978։
 ՀՄ,Օ—Հ. Մաքսոսյան, Օգոստոս, Երևան, 1967։
 ՀՇ,ՔՀ—Հ. Շիրազ, Քնար Հայաստանի, գիրք 3, Երևան, 1974։
 ՀՔ,ԸԵ—Հ. Քաչար, Ընտիր երկեր, հ. առաջին, Երևան, 1955։
 ՀՔ,ԵԺ—Հ. Քաչար, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1967։
 ԿԱ,ԸԵ—Կ. Աղայան, Ընտիր երկեր, Երևան, 1950։
 Մ,ԳՄ—Մուրացյան, Գևորգ Մարգարյանի, Երևան, 1977։
 ՆԴ,ԵԺ—Նար-Դոս, Երկերի ժողովածու, հ. առաջին, Երևան, 1955։
 ՆՆ,ՊՎ—Նար-Դոս, Պատմվածքներ և վիպակներ, Երևան, 1978։
 ՆԶ,ՊՊ—Ն. Ջառյան, Պ. Պետրոսյան ու իր նախարարները, Երևան, 1958։
 Շ,Ե—Շիրվանզադե, Երկեր, հ. 1, Երևան, 1971։
 Շ,ԵԺ—Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1959։
 ՇԲ,ՄԲՄ—Շ. Թաթևյան, Մեկը բազմապատկած միլիոնով, Երևան, 1977։
 ՊՁ,ԿԵ—Պ. Ջեյրուսյան, Արշակ Երկրորդ, Երևան, 1977։
 ՊՍ, ԵԺ—Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1972։
 ՍԽ,ՄՍ—Ս. Խանգաղյան, Մխիթար սպարապետ, Երևան, 1961։
 ՎԱ,ՈՊ—Վ. Անանյան, Որսորդական պատմվածքներ, Երևան, 1977։
 ՎԲ,ԿԴ—Վ. Բաբվենց, Կապույտ ծաղիկներ, Երևան, 1972։
 ՔԲ,ՈՀ—Ք. Բաֆալցյան, Ոսկե հովիտ, Երևան, 1955։

О НЕКОТОРЫХ УПОТРЕБИТЕЛЬНЫХ И СТРУКТУРНЫХ ОСОБЕННОСТЯХ ВЕРБАЛЬНЫХ ЧЕТЫРЕХЧЛЕННЫХ СЛОВСОЧЕТАНИЙ

РАФИК МАНУҚЯН

Р е з ю м е

По частоте употребления четырехчленные вербальные словосочетания значительно уступают простым и трехчленным. Так, в исследованных отрывках простые вербальные словосочетания составляют около 60 процентов, трехчленные — примерно 34, четырехчленные — 5,5 и пяти- и более членные — 1 процент. В структуральном аспекте четырехчленные словосочетания превосходят простые и трехчленные. Дополнения, выраженные разными частями речи и разными падежами существительного, сочетаются в простых словосочетаниях 9 раз, в трехчленных — 36, в четырехчленных — 84 раза. В четырехчленных вербальных словосочетаниях дополнение и дополняемое находятся в отношениях трех видов — примыкания, примыкания-управления, управления. Самый распространенный вид отношений — примыкание-управление.